վում է այդ բերդում արաբական վոստիկան Բշրի կողմից, բայց նա դուրս է գալիս ամրոցից, հարձակվում թշնամու վերա և փախցնում Դվին։ Յերկու տարի հետո միայն վոստիկանը տեր է դառնում ամրոցին՝ հայ զորականների թողնելու հետևանքով*։

Բերդի տակն է, արևմտահարավային կողմից, Ղալաղիպի (Բերդատակ) թուրքական փոքրիկ գյուղը. նորանից հարավ յեղած պուրակներով ծածկված ձորակը ձգվում է դեպի փոքր Ախ--Դաղի փեշերը**. այստեղ, ինչպես և դեպի բերդը տանող ձորակի բերնում, գտնվում են մի մի ճգնարան՝ խցիկներ, առանց վոր և է արձանագրության։ Գետակի ափին, ձորագոգում գտնվում է մի հին գյուղատեղ տների ավերակներով. ուշադրության արժանի է, մի վիմափոր, բավական մեծ սենյակ, վեմքարով. կողքին մի ուրիշ փոքրը. նորա գլխին յերկու ուրիշ վիմափոր սենյակներ, հարավային կողմը պատշգամբի տեղով. յերևում են դերանների փոսերի տեղը։

Բայց Խաղբակյանց իշխանության սահմանները ձգվում եյին ավելի դեպի արևելք Գեղարքունյաց գավառի միջին մասերը, մինչև ներկա Վերին Ղարանլուխ գյուղի մոտերքը, վոր մի խաչքարի 1220 թ. արձանագրությամբ Վասակի և յուր Բաբաք! վորդու իշխանության մեջն եր[1]։

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը Խաղբակյանների իշխանության սահմանների մասին, տեսնում ենք, վոր նա մի ամբողջություն չեր կազմում, այլ բաղկացած եր մի քանի մեծ ու փոքր մասերից. ամենից ընդարձակ մասը Շահապունիքն եր Ճահուկի արևելյան բաժնի և Վայոց ձորի սահմանակից մասերի հետ, Ճահուկ և Շահապոնք գետակների խառնուրդից մինչև Բարկուշատ և Արփա գետերը. վերջինի հետ միացման կետեր եյին կազմում Մարտիրոսի, Ջուլի, գուցե և Քիշնեյի վտակները։ Թեական պիտի համարել արևմտյան Ճահուկը և Երնջակի սահմանակից մասը Ապրակունյաց վանքով։ Ամբողջական մասեր եյին Սրկղունյաց վտակի հովիտը Վայոց ձորում և Քեղվա ձորը Այրի կամ Գեղարդի վանքի հետ Ազատ գետի հովտում։ Ի՞նչ ընդարձակություն ուներ Խաղբակյանց բաժինը Կեչառույքի կամ Ծաղկեձորի վանքով, վորոշել չենք կարող։ Իշխանության սահմանների և կեդրոնների մասին պարզ գաղափար է տալիս վերջում զետեղած քարտեզը։

Դ.

ՎԱՍԱԿ ԽԱՂԲԱԿՅԱՆ ՅԵՎ ՅՈՒՐ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ.

Նախընթաց գլխի մեջ տեսանք, թե Պռոշյանց իշխանությունը պետք է հաստատված լինի վոչ վաղ քան 1201 թիվը և վոչ ուշ քան 1214, յերբ Վասակ իբրև նոր իշխանության գլուխ սկսում է շինարարությամբ զբաղվել, բայց ամենայն հավանականությամբ 1201—1210 թ.թ. մեջ։ Նորա կյանքի մասին մանրամասնություններ չգիտենք, բայց հայ պատմիչների համառոտ բնորոշումները բավական են համոզելու, վոր ԺԳ. դարու առաջին քառորդի նշանավոր դեմքերից մեկը պետք է յեղած լինի. Գանձակեցին[2] նորան անվանում է «Վասակ քաջ». Որբելյանը պատմելով Իվանե աթաբեկի և Գեորգի Լաշայի ձեռքով նորա կողմնակալ նշանակվելու դեպքը, անվանում է նորան «ամենօրհնեալ Վասակ Խաչենեցի», «որ և մեծաջան վաստակօք բազումս նահատակեալ ի վերայ քրիստոնէից եւ եկեղեցեաց, օրհնեցաւ եւ գովեցաւ յամենայն աշխարհաց, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի յայսմհետէ մինչև յաւիտեան»[3]։ Այրիվանեցու բնորոշումը տեսանք վերև, վոր հորն ու վորդիներին հավասարապես վորակում է վորպես թշնամիների դեմ «քաջ» և քրիստոնյաների համար «բարի» անձինք։

Գրական այս տեղեկությունների վերա ավելանում են արձանագրությունները, վորոնք պատերազմական գործերի մեջ ցույց տված հաջողությունների հետ՝ մատնանշում են նաև նորա շինարար ու գեղասեր վոգին. դոցանից մեկը գտնվում է Եղեգյաց ձորի Արատեսի վանքում[4], վոր թեև հայտնի եր առաջուց, բայց առանց թվականի, այն ինչ գրված է ՈԿԴ (=1214) թվականին, միայն փոքր ինչ կողքից, ուստի և վոչ Ջալալյանի և վոչ Քաջբերունու, ինչպես և բնականաբար նրանց հետևող Ալիշանի կողմից նկատված (պատկեր 3. Հավել. 3)։ Արձանագրությունը գրված է Վասակ Խաղբակյանի բերանից և թվագրված «ի թագաւորութեան Վրաց Լաշային եւ յաշխարհակալութեան Իւանէի աթաբակի». և «ի հայրապետութեան տր Սարգսի»[5]. Վասակն իրեն անվանում է «որդի Խաղբակայ», հիշում է յուր իշխանության սահմանները՝ «կողմնապահ ի Գառ-

* Ցովհ. կաթ. Ղուկասեան մատենադարան. Թիֆլիս. 1912. յեր. 356/7։

** Տեղական թուրքերը կոչում են Դավա-Բոյուն։

1 Ազգ. Հանդ. XVIII. 152։

2 Ղուկասեան մատենադարան. Թիֆլիս. 1909. 194։

3 Ղուկասեան մատենադարան. Թիֆլիս 1910. 397։

4 Ջալալեան. Բ. 157. Քաջբերունի. «Արարատ» 1888. 769։ Ալիշան. Սիսական եր. 143։

5 Այս տէր Սարգիսը Նորավանից եպիսկոպոսն է, Սիւնեաց տէր Ստեփանոսի յաջորդը 1216 թուից սկըսած. Օրբէլեան. 352։